



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2022 թվականի N 415 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 145-Ն, 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 495-Ն ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 460-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 36.2-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման նախաբանից հանել «10-րդ հոդվածի 6-րդ, 11-րդ հոդվածի 4-րդ ու 10-րդ և» բառերը, իսկ «մասի» բառը փոխարինել «և 36.2-րդ հոդվածի 3-րդ մասերի» բառերով.

2) որոշման հավելվածներում և ձևերում «սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)» և «տարածքային գործակալություն (բաժին)» բառերը

և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «տարածքային կենտրոն» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով.

3) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին ու Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարին՝ ապահովել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց մասին համապատասխան տեղեկատվության փոխանակումը:».

4) որոշման 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ ապահովել ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակների (սոցիալական անձնագրերի և նպաստի տեսակի) պարտադիր տեղադրումը նախարարության և Ծառայության կայքէջերում:».

5) որոշման N 2 հավելվածի 11-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «աղետի հետևանքով տրամադրված տնակ» բառերը փոխարինել «երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություն (տնակ)» բառերով,

բ. 2-րդ ենթակետում «ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն, տնակ» բառերը փոխարինել «ոչ հիմնական շինություն (տնակ)» բառերով,

գ. 3-րդ ենթակետում «վթարային (3-րդ կամ 4-րդ աստիճանի) բնակարան» բառերը փոխարինել «3-րդ կամ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակարան (բնակելի տուն)» բառերով.

6) որոշման N 3 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «N 1 հավելվածում» բառերը փոխարինել «հավելվածում» բառով,

բ. 7-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը,

գ. 8-րդ կետի 1-ին ենթակետում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Մոնցիալական աջակցության մասին» օրենքի 36.3-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով,

դ. 13-րդ կետի 4-րդ ենթակետում «հանձնաժողովի տեղեկանքի» բառերը փոխարինել «հանձնաժողովի որոշման» բառերով, իսկ 20-րդ ենթակետում «եզրակացություն (տվյալ) ստացված զբաղվածության տարածքային կենտրոնից» բառերը՝ «տարածքային կենտրոնի զբաղվածության հարցերով լիազորված պաշտոնատար անձի եզրակացություն (տվյալ)» բառերով,

ե. 14-րդ կետի 6.2-րդ ենթակետի «ա» պարբերությունում «կրում է այլընտրանքային պատիժ» բառերը փոխարինել «պրոբացիայի շահառու է» բառերով,

զ. 22-րդ կետի 1-ին ենթակետում «աղետի հետևանքով տրամադրված տնակ» բառերը փոխարինել «երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություն (տնակ)» բառերով, իսկ «տեղական ինքնակառավարման մարմնի տեղեկանք.» բառերը՝ «համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք.» բառերով,

է. 22-րդ կետի 2-րդ ենթակետում «ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն, տնակ» բառերը փոխարինել «ոչ հիմնական շինություն (տնակ)» բառերով, իսկ «տեղական ինքնակառավարման մարմնի տեղեկանք.» բառերը՝ «համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք.» բառերով,

ը. 22-րդ կետի 3-րդ ենթակետում «վթարայնության 3-րդ կամ 4-րդ աստիճան ունեցող բնակարան» բառերը փոխարինել «3-րդ կամ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակարան (բնակելի տուն)» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության լիազորված մասնագիտացված կազմակերպության կամ այդ կազմակերպությունից ստացված համապատասխան եզրակացության հիմքով, տվյալ եզրակացությունը տալու օրվանից հետո տվյալ շինության ամրացման աշխատանքներ իրականացված չլինելու դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմնի տված տեղեկանքը.» բառերը՝ «շենքերի

ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացություն և համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք՝ եզրակացության տրամադրման օրվանից հետո տվյալ շինության տեխնիկական վիճակի բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացված լինելու կամ չլինելու մասին.» բառերով,

թ. 22-րդ կետի 5-րդ ենթակետում «տեղական ինքնակառավարման մարմնից» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարից» բառերով,

ժ. 23-րդ կետի 1-ին ենթակետում «համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 8-ի «Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին» N 853-Ն որոշմամբ սահմանված՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկի» բառերը փոխարինել «օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկի համաձայն» բառերով, 3-րդ ենթակետը «նպաստները» բառից հետո լրացնել «, ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ վճարվող դրամական աջակցությունը.» բառերով, իսկ 4-րդ ենթակետում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին» բառերը փոխարինել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ» բառերով,

ժա. 27-րդ կետը «նպաստների,» բառից հետո լրացնել «ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ վճարվող դրամական աջակցության,» բառերով,

ժբ. 30-րդ կետը «նպաստների,» բառից հետո լրացնել «ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ վճարվող դրամական աջակցության,» բառերով,

ժգ. 31-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կնքված համագործակցության հուշագրերի հիման

վրա կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում ստացված եկամուտը:»,

ժդ. 32-րդ կետի 1-ին ենթակետում «կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական» բառերը փոխարինել «կադաստրի» բառով,

ժե. 33-րդ կետի 3-րդ ենթակետը «նպաստների» բառից հետո լրացնել «ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ վճարվող դրամական աջակցության, ամսական դրամական բավարարման,» բառերով,

ժզ. 36-րդ, 39-րդ և 43-րդ կետերից հանել «Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում տեղակայված տարածքային կենտրոնի դեպքում» բառերը,

ժէ. ուժը կորցրած ճանաչել 37-րդ և 58-րդ կետերը,

ժը. 45-րդ կետից հանել «գրավոր» բառը,

ժթ. N 1 ձևի 3-րդ կետը «շտեմարանում,» բառից հետո լրացնել «սպառած խմելու ջրի քանակը՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունում առկա տվյալներով,» բառերով,

ի. N 1 ձևը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.2-րդ կետով.

«3.2) հայտնում ենք մեր համաձայնությունը, որ սույն դիմում-հայտարարագրում նշված անձանց նույնականացման տվյալները տրամադրվեն օրենսդրությամբ սահմանված, ընտանիքների անապահովության գնահատման հիմքով, ծրագրեր (նյութական և ոչ նյութական աջակցություն, արտոնություններ, զեղչեր և այլն) իրականացնող պետական մարմիններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կնքված համագործակցության հուշագրերի (այդ թվում՝ նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգավորումներին համապատասխան՝ անձնական տվյալների օգտագործման և մշակման պայմանները սահմանող պարտավորագրի) հիման վրա՝ այլ կազմակերպություններին.»,

իա. N 1 ձևի «Ներկայացվող փաստաթղթերի ցանկը» սյունակի 1-ին տողում «Տեղեկանք բնակարանային պայմանների մասին (աղետի հետևանքով տրամադրված տնակ, ոչ հիմնական շինություն)՝ տրված տեղական ինքնակառավարման

մարմնի կողմից» բառերը փոխարինել «Համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք՝ բնակարանային պայմանների մասին (Երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություն (տնակ), ոչ հիմնական շինություն (տնակ)» բառերով,

իբ. N 1 ձևի «Ներկայացվող փաստաթղթերի ցանկը» սյունակի 2-րդ տողում «3-րդ կամ 4-րդ աստիճանի վթարային բնակարանի համար Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության լիազորված մասնագիտացված կազմակերպության կամ այդ կազմակերպությունից ստացված համապատասխան եզրակացության հիման վրա տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված տեղեկանք» բառերը փոխարինել «բնակարանի (բնակելի տան) տեխնիկական վիճակի մասին շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացություն և համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք՝ եզրակացության տրամադրման օրվանից հետո տվյալ շինության տեխնիկական վիճակի բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացված լինելու կամ չլինելու մասին» բառերով, իսկ 11-րդ տողում «հաշմանդամության տեղեկանքի» բառերը՝ «որոշման» բառով,

իգ. N 1 ձևի «Տեղեկություններ բնակարանային պայմանների, սեփականության և կոմունալ հարմարությունների առկայության մասին» աղյուսակում «Առանձին բնակարան (առանձնատուն)» բառերը փոխարինել «Բնակարան (բնակելի տուն)» բառերով, «Ոչ հիմնական շինություն» բառերը՝ «Ոչ հիմնական շինություն (տնակ)» բառերով, «Տնակ» բառը՝ «Երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություն (տնակ)» բառերով, իսկ «Վթարային բնակարան (3-րդ կամ 4-րդ աստիճանի)» բառերը՝ «3-րդ կամ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակարան (բնակելի տուն)» բառերով,

իդ. N 4 ձևի 5-րդ և 6-րդ կետերից հանել «N 1» բառերը,

իե. N 4 ձևի 34-րդ կետում «տեղեկանք՝ բնակավայրից, իսկ 3-րդ կամ 4-րդ աստիճանի վթարային բնակարանի համար՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության լիազորված մասնագիտացված կազմակերպության կամ այդ կազմակերպությունից ստացված համապատասխան եզրակացության հիման

վրա տեղական ինքնակառավարման մարմնի տված տեղեկանքը» բառերը փոխարինել «բնակարանի (բնակելի տան) տեխնիկական վիճակի մասին շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացություն և համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք՝ եզրակացության տրամադրման օրվանից հետո տվյալ շինության տեխնիկական վիճակի բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացված լինելու կամ չլինելու մասին» բառերով,

իգ. N 4 ձևի 42-րդ կետում «տեղական ինքնակառավարման մարմնից» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարից» բառերով,

իէ. N 4 ձևի 43-րդ կետում «կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական» բառերը փոխարինել «կադաստրի» բառով,

իը. N 4 ձևը 43-րդ սյունակի 4-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ տողով.

« 43-րդ սյունակի 5-րդ տողը	Ընտանիքի տվյալը	խմելու ջրի արոնենտային գրքույկը	խմելու ջրի արոնենտային գրքույկի համարը	».
----------------------------	-----------------	---------------------------------	--	----

7) որոշման N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

8) որոշման N 5 հավելվածի՝

ա. 2-րդ կետից հանել «N 1» բառերը,

բ. 2.1-ին կետում «ծրագրով» բառը փոխարինել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կնքված համագործակցության հուշագրերի հիման վրա կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերով» բառերով,

գ. 7-րդ և 8-րդ կետերում «կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական» բառերը փոխարինել «կադաստրի» բառով.

9) որոշման N 6 հավելվածի՝

ա. 4-րդ կետի 1-ին ենթակետում «տրանսպորտի և կապի» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և ենթակառուցվածքների» բառերով,

բ. 4-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը, 3-րդ ենթակետից՝ «կառավարությանն առընթեր» բառերը, 4-րդ ենթակետից՝ «աշխատակազմի» բառը,

գ. 4-րդ կետի 5-րդ ենթակետում «կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական» բառերը փոխարինել «կադաստրի» բառով,

դ. 6-րդ կետում «Անհատական տվյալների» բառերը փոխարինել «Անձնական տվյալների պաշտպանության» բառերով,

ե. 10-րդ կետից հանել «N 1» բառերը,

զ. 12-րդ կետը «տեղեկատվությունը» բառից հետո լրացնել «(սոցիալական անձնագրերի համարները և նպաստի տեսակը)» բառերով, իսկ «պաշտոնական կայքէջում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատված ձևաչափով» բառերը փոխարինել «և Ծառայության պաշտոնական կայքէջերում:» բառերով,

է. ուժը կորցրած ճանաչել 13-րդ և 28-րդ կետերը,

ը. 22-րդ կետից հանել «ռեեստրների մուտքագրում», բառերը,

թ. 35-րդ կետի 4-րդ ենթակետում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին» բառերը փոխարինել «ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ վճարվող դրամական աջակցության, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ» բառերով,

ժ. 35-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) վճարման ռեեստրների մուտքագրումներ:».

10) որոշման N 7 հավելվածում

ա. 1-ին կետում «տրանսպորտի և կապի» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և ենթակառուցվածքների» բառերով, իսկ «առցանց՝ վեբ ծառայության միջոցով» բառերը՝ «էլեկտրոնային եղանակով» բառերով,

բ. 2-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը,

գ. 4-րդ կետից հանել «կառավարությանն առընթեր» բառերը, իսկ «էլեկտրոնային փոստով, իսկ 2014 թվականի հոկտեմբերից՝ առցանց՝ վեբ ծառայության միջոցով» բառերը փոխարինել «էլեկտրոնային եղանակով» բառերով,

դ. 5-րդ կետից հանել «աշխատակազմի» բառը,

ե. 7-րդ կետում «կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական» բառերը փոխարինել «կադաստրի» բառով,

զ. 8-րդ և 9-րդ կետերում «առցանց՝ վեբ ծառայության միջոցով» բառերը փոխարինել «էլեկտրոնային եղանակով» բառերով,

է. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ կետով.

«	10. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ (համաձայնությանը)	խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բնակիչ բաժանորդներ	բաժանորդի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան, համարը, բաժանորդի քարտի համարը, խմելու ջրի սպառման ամսական չափը, հանրային ծառայությունների համարանիշը	նախորդ 12 ամիսների ծախսը	յուրաքանչյուր ամսվա 25-ը	էլեկտրոնային եղանակով	».
---	---	--	---	--------------------------	--------------------------	-----------------------	----

11) որոշման N 8 հավելվածի՝

ա. 1-ին կետը «սոցիալական» բառից հետո լրացնել «նպաստի» բառով,

բ. 4-րդ կետում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ» բառերը փոխարինել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36.2-րդ» բառերով,

գ. 9-րդ կետում «պաշտոնական կայքէջում տեղակայված տեղեկատվական բազայից, որը հասանելի է դիմող ընտանիքին՝ իր տվյալների մասով:» բառերը փոխարինել «և Ծառայության պաշտոնական կայքէջերում տեղակայված տեղեկատվությունից» բառերով,

դ. 21-րդ կետում «տեղական ինքնակառավարման մարմնի» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարի» բառերով,

ե. ուժը կորցրած ճանաչել 27-32-րդ, 51-րդ, 52-րդ, 55-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ և 61-րդ կետերը,

զ. 47-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«47. Նպաստի և հրատապ օգնության կանխիկ վճարման ցուցակները (այսուհետ՝ վճարման ցուցակ) կազմվում են էլեկտրոնային տարբերակով՝ գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության կողմից (այսուհետ՝ կազմակերպություն)՝ տարածքային կենտրոնների տրամադրած ամենամյա տեղեկատվության հիման վրա:»,

է. 49-րդ կետից հանել «վճարման ցուցակների երկրորդ օրինակը տեսանելի վայրերում փակցնելու միջոցով և» բառերը,

ը. 50-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«50. Կազմակերպությունը վճարման ցուցակները (կանխիկ և անկանխիկ) կազմելուց հետո՝

1) նույն աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է տարածքային կենտրոնների ղեկավարներին՝ նրանց պաշտոնական էլեկտրոնային փոստին հաղորդագրություն ուղարկելու միջոցով.

2) տարածքային կենտրոններին տրամադրում է իրավասություն՝ 24 ժամվա ընթացքում վճարման ցուցակներում նպաստի վճարման թույլտվությունը որոշելու համար, որից հետո

3) մեկ աշխատանքային օրվա ընթացքում տարածքային կենտրոնների նշումների հիման վրա փոփոխված կանխիկ վճարման ցուցակները (որում ներառում է նաև ընտանիքի բոլոր ներկա չափահաս անդամների տվյալները) փոխանցում է

համապատասխան վճարող կազմակերպություն և Ծառայություն, իսկ անկանխիկ վճարման ցուցակները՝ Ծառայություն:»,

թ. 53-րդ կետից հանել «յուրաքանչյուր էջի» բառերը,

ժ. 56-րդ կետում «սույն կարգի 55-րդ կետով սահմանված տեղեկությունների» բառերը փոխարինել «ցուցակում գրանցված նպաստառու կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների թվի, վճարման ենթակա նպաստի կամ հրատապ օգնության, գումարների չափերի» բառերով,

ժա. 60-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«60. Վճարող կազմակերպությունը վճարումն ավարտելուց հետո 3 օրացուցային օրվա ընթացքում՝

1) կազմակերպություն է հանձնում լրացված վճարման ցուցակները (այդ թվում՝ ռեեստրները).

2) Ծառայություն է հանձնում փոխադարձ հաշվետվության ակտի՝ համաձայն N 12 ձևի, 2 օրինակ:»,

ժբ. N 8 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 60.1-ին և 60.2-րդ կետերով.

«60.1. Կազմակերպությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է ռեեստրների մուտքագրում և Ծառայություն է ներկայացնում վճարումների մասին ամփոփ տեղեկատվություն:

60.2. Ծառայությունը կազմակերպությունից ստացված տեղեկատվության հիման վրա 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքում է փոխադարձ հաշվետվության ակտերը, որի 2-րդ օրինակը վերադարձվում է վճարող կազմակերպությանը:»,

ժգ. ուժը կորցրած ճանաչել NN 3 և 11 ձևերը,

ժդ. N 9 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձև N 9»

ՑՈՒՑԱԿ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ _____ ԵՎ ՆԱԽՈՐԴ
ԱՄԻՄՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ) ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՄԱՆ

բնակավայրի
անվանումը

ՆՊԱՍՏՆԵՐ _____.20_թ
Տարածքային կենտրոն

001 Վճարող/մասնաճյուղ

Բնակության վայրը		Ազգանունը, անունը, հայրանունը	Հանրային ծառայությունների համարանիշը կամ նշում համարանիշ չունենալու մասին	Սոցիալական անձնագրի համարը	Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը	Անցած ամիսների			Հունվար ամսվա	NN ը/կ	Սոցիալական անձնագրի համարը	Անցողիկ գումարը (դրամ)	Հունվար	
շենքը	բնակարանը					գումարը (դրամ)	գումարը (դրամ)	օրը					գումարը (դրամ)	օրը
		Աղաջանյան Անահիտ Ա.		691687		***		16000		1	691687		16000	
		Աղաջանյան Անահիտ Հ.		691798		***		21500		2	691798		21500	
		Աղաջանյան Անահիտ Մ.		852316		***		27000		3	852316		27000	
										4				
										5				
										6				
										7				»,

ժե. N 10 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Ձև N 10 »

ՑՈՒՑԱԿ

_____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ _____ ԵՎ ՆԱԽՈՐԴ
ԱՄԻՄՆԵՐԻ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ

ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ _____.20_թ.
Տարածքային կենտրոն
001 Վճարող/մասնաճյուղ

բնակավայրի
անվանումը

Վճարող/մասնաճյուղ

Բնակության վայրը		Ազգանունը, անունը, հայրանունը	Հանրային ծառայությունների համարանիշը կամ նշում համարանիշ չունենալու մասին	Սոցիալական անձնագրի համարը	Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը	Անցած ամիսների			Հունվար ամսվա	NN ը/կ	Սոցիալական անձնագրի համարը	Անցողիկ գումարը (դրամ)	Հունվար	
շենքը	բնակարանը					գումարը (դրամ)	գումարը (դրամ)	օրը					գումարը (դրամ)	օրը

		Աղաջանյան Անահիտ Ա.		691687		***	16000			1	691687		16000	
		Աղաջանյան Անահիտ Հ.		691798		***	16000			2	691798		16000	
		Աղաջանյան Անահիտ Մ.		852316		***	16000			3	852316		16000	
										4				
										5				
										6				
										7				
						***						***		

»,

ժգ. N 12 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Ձև N 12

ՓՈՒՄԱԴԱՐՁ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱԿՏ

_____վճարող կազմակերպության _____ և միասնական
սոցիալական ծառայության միջև _____
ամսվա նպաստի և եռամսյակային հրատապ օգնության գումարների
փոխհաշվարկի
վերաբերյալ

		Ամսաթիվը	Ընտանեկան նպաստը	Սոցիալական նպաստը	Հրատապ օգնությունը	Ընդամենը
պարտք վճարումից առաջ	վճարող կազմակերպությունը					
	Ծառայությունը վճարող կազմակերպությանը					
Ֆինանսավորվել է						
Այդ թվում՝						
1.						
2.						
Հետգանձում						
Վճարում (սկիզբ-վերջ)						
Այդ թվում՝						

1. Անավա վերջ						
2. Անավա սկիզբ						
Հետվերադարձ						
պարտք վճարումից հետո	վճարող կազմակերպությունը Ծառայությանը					
	Ծառայությունը վճարող կազմակերպությանը					

Պարտքի գումարը նշել բառերով -----

Վճարող կազմակերպության _____ **Ծառայության** _____
պատասխանատու _____ **գլխավոր քարտուղար** _____
աշխատող _____

Հաշվապահ _____ **Հաշվապահ** _____
Կ.Տ. _____ **Կ.Տ. ».** _____

12) որոշման N 12 հավելվածի 17-րդ կետում «Հայաստանի Հանրապետության մարզպետին, իսկ Երևանում Երևանի քաղաքապետին» բառերը փոխարինել «Ծառայության պետին» բառերով, իսկ «սույն կարգի 16-րդ կետով սահմանված կարգով ընթացք տալու համար» բառերը՝ «կրկնակի քննարկման համար» բառերով.

13) ուժը կորցրած ճանաչել N 14 հավելվածը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով իրականացվող պետական նպաստների կանխիկ վճարման ծառայություններ մատուցելու ոլորտում «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանը լիազորված կազմակերպություն ճանաչելու և նրա հետ կնքվող վճարման ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» N 495-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.2.1-ին կետով.

«1.2.1. Նպաստի վճարումը կատարելիս նպաստառուին տրամադրվում է վճարման կատարման փաստը հաստատող կտրոն, որը տպվում է 2 օրինակից, որոնցից մեկը՝ նպաստառուի կողմից ստորագրված օրինակը, պահվում է կատարողի մոտ: Վճարման կտրոններում ներառվում են նպաստառուի վերաբերյալ վճարման ցուցակներում արտացոլված, ինչպես նաև նպաստն ստացողի վերաբերյալ տվյալները, (անձը հաստատող փաստաթուղթ) վճարման ամսաթիվը և ստորագրությունը:».

2) որոշման հավելվածի՝

ա. 1.3-րդ կետից հանել «(եթե տվյալ պահին վճարման ցուցակները գտնվում են բաժանմունքում)» բառերը,

բ. 1.4-րդ կետում «մարմին» բառը փոխարինել «կենտրոն» բառով,

գ. 1.6-րդ կետը «ցուցակները» բառից հետո լրացնել «և նպաստառուի կողմից ստորագրված վճարման կտրոնները» բառերով,

դ. ուժը կորցրած ճանաչել 1.10-րդ կետը,

ե. 1.16.1-ին և 1.16.2-րդ կետերում «մարմինների» բառը փոխարինել «կենտրոնների» բառով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 16-ի N 352-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 460-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածում՝

ա. 12-րդ կետը «կազմում է ավանդատուների» բառերից հետո լրացնել «էլեկտրոնային» բառով,

բ. 26-րդ կետը «Փոխհատուցման» բառից հետո լրացնել «էլեկտրոնային» բառով, իսկ «ցուցակները» բառից հետո՝ «՝ համաձայն N 4 ձևի,» բառերով,

գ. 41-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«41. Փոխհատուցումը վճարելու համար կանխիկ վճարման էլեկտրոնային ցուցակները ձևավորելուց հետո կազմակերպությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վճարող կազմակերպություն:»,

դ. 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 49-րդ և 50-րդ կետերը և N 5 ձևն ուժը կորցրած ճանաչել,

ե. 51-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«51. Վճարող կազմակերպությունը վճարումն ավարտելուց հետո երեք օրացուցային օրվա ընթացքում՝

1) Կազմակերպություն է հանձնում լրացված կանխիկ վճարման էլեկտրոնային ցուցակները (այդ թվում՝ ռեեստրները).

2) Ծառայություն է հանձնում փոխադարձ հաշվետվության ակտը՝ 2 օրինակից՝ համաձայն N 6 ձևի:»,

գ. 51-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 51.1-ին և 51.2-րդ կետերով.

«51.1. Կազմակերպությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում ռեեստրը մուտքագրում և ծառայություն է ներկայացնում տվյալ ամսվա վճարման ցուցակներով վճարումների մասին ամփոփ տեղեկատվություն:

51.2. Ծառայությունը կազմակերպությունից ստացված տեղեկատվության հիման վրա երկու աշխատանքային օրվա ընթացքում կնքում է փոխադարձ հաշվետվության ակտ՝ 2 օրինակից, որից 1 օրինակը վերադարձնում է վճարող կազմակերպությանը:»,

է. N 4 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձև N 4

_____ 20 թ.

Ց ՈՒ Ց Ա Կ

ԱՎԱՆԴԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ
 _____ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ _____ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԱՄԻՄՆԵՐԻ

Բնակավայրի
 անվանումը

001 Վճարող/մասնաճյուղ

001 Վճարող/մասնաճյուղ

Բնակության վայրը		Ազգանունը, անունը, հայրանունը	Հանրային ծառայությունների համարանիշը	Գործի համարը	Անձնագրի սերիան, համարը	Անցած ամիսների		Ամսվա		NN ը/կ	Գործի համարը	Անցողիկ գումարը (դրամ)	Ամսվա
շենքը	բնակարանը					գումարը (դրամ)	գումարը (դրամ)	օրը	գումարը (դրամ)				

»,

ը. N 6 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Ձև N 6

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱԿՏ

**վճարող կազմակերպության _____ և միասնական
սոցիալական ծառայության միջև _____
ամսվա ավանդների փոխհատուցման գումարների փոխհաշվարկի մասին**

		Ամսաթիվը	Ավանդի փոխհատուցումը
պարտք վճարումից առաջ	վճարող կազմակերպությունը Ծառայությանը		
	Ծառայությունը վճարող կազմակերպությանը		
Ֆինանսավորվել է Այդ թվում՝			
1.			
2.			
Հետգանձում			
Վճարում (սկիզբ-վերջ)			
Այդ թվում՝			
1. Ամսվա վերջ			
2. Ամսվա սկիզբ			
Հետվերադարձ			
պարտք վճարումից հետո	վճարող կազմակերպությունը Ծառայությանը		
	Ծառայությունը վճարող կազմակերպությանը		

Պարտքի գումարը նշել բառերով _____

_____ Վճարող կազմակերպության _____ Ծառայության _____
պատասխանատու _____ գլխավոր քարտուղար _____
աշխատող _____

Հաշվապահ _____ Հաշվապահ _____
Կ.Տ. Կ.Տ. »:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ բացառությամբ 1-ին կետի 10-րդ ենթակետի «է» պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ** **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

Երևան